ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N o 1022-Ա/2 «10» օգոստոսի, 2020 թ.

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված հավելված N 5-ի աղյուսակ N 7.1-ի «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման ««Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղության շրջանակներում կազմակերպվող մրցույթների համակարգման նպատակով ձևավորել մասնագիտական փորձագիտական խորհուրդ և հաստատել խորհրդի անհատական կազմն ու աշխատակարգը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին:

Նախարար Արայիկ Հարությունյան

Հավելված 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«10» օգոստոսի, 2020 թ.
N 1022-Ա/2 հրամանի

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

| Հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | Գիտական աստիճան | Աշխատավայր, պաշտոն |
|---|---|---|---|
| 1. | Զաքարյան Հայկ Աշոտի | ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու | Երևանի պետական համալսարանի Կ/Հ սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի գիտաշխատող |
| 2. | Խաչատրյան Հրանտ Հարությունի | ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու | «ԵրևանԷՆ» գիտակրթական հիմնադրամի տնօրեն |
| 3. | Մկրտչյան Հռիփսիմե Վարդանի | ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու | Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) կրտսեր գիտաշխատող |
| 4. | Մալխասյան Միքայել Արմենի | պատմական գիտությունների թեկնածու | Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի դոցենտ |
| 5. | Հակոբյան Ռոբերտ Մամիկոնի | _____ | ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի կրտսեր գիտաշխատող |
| 6. | Գևորգյան Սուսաննա Աշոտի | _____ | Երևանի պետական համալսարանի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտ |
| 7. | Սողոմոնյան Ամալյա Արմենի | _____ | Երևանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ, դասախոս |

Հավելված 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«10» օգոստոսի, 2020 թ.
N 1022-Ա/2 հրամանի

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված հավելված N 5-ի աղյուսակ N 7.1-ի «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման ««Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղության շրջանակներում կազմակերպվող մրցույթների գործընթացը համակարգող մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

2. Խորհրդի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված հավելված N 5-ի աղյուսակ N 7.1-ի «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման ««Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղության շրջանակներում կազմակերպվող մրցույթների հրավերների փաթեթների մշակելը, հայտերի գնահատումն ու դրանց վարկանիշային ցանկերի կազմումն իրականացնելը և մրցույթների գործընթացը համակարգելն է:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

4. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

## II. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը (այսուհետ՝ նախարար):

6. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ամսական առնվազն մեկ անգամ:

7. Խորհրդի անդամներից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրվում է խորհրդի նախագահն ու քարտուղարը:

8. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է խորհրդի նախագահը:

9. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը վարում է խորհրդի անդամներից մեկը՝ խորհրդի նախագահի առաջարկությամբ:

10. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված եզրակացությունների կատարման ընթացքի վերաբերյալ խորհրդի նախագահի զեկուցմամբ:

11. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

12. Խորհրդի ցանկացած որոշում կայացվում է ընհանուր փոխհամաձայնության (կոնսենսուսի) սկզբունքով:

13. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կամ ժամանակավորապես դադարում են՝

1) իր դիմումի համաձայն.

2) խորհրդի նիստերից չորս անգամ անընդմեջ անհարգելի բացակայության դեպքում:

14. Նույն հարցի շուրջ երեք նիստի ընթացքում որոշում չկայացնելու դեպքում կարող է հրավիրվել ընդլայնված նիստ՝ նախարարի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահի մասնակցությամբ:

15. Խորհրդի անդամները խորհրդի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի և նիստի օրակարգի մասին տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ:

16. Խորհրդի անդամների կողմից այլ անձանց սույն աշխատակարգով չնախատեսված ձևով պարզաբանումներ և/կամ մրցութին վերաբերող այլ տեղեկություններ տրամադրելն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Խորհուրդը պարտավոր է ամփոփիչ հաշվետվություն ներկայացնել նախարարին:

## III. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

18. Խորհրդի նախագահը՝

1) վարում է խորհրդի նիստերը.

2) ստորագրում է խորհրդի եզրակացությունները և նիստերի արձանագրությունները, խորհրդի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

3) իր բացակայության դեպքում խորհրդի անդամներից մեկին առաջարկում է վարել խորհրդի նիստը.

4) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը.

5) խորհրդի ընդունած եզրակացությունների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

6) հիմնվելով մրցույթների հայտերի վարկանշային ցանկերի վրա՝ նախարարի հաստատմանն է ներկայացնում մրցույթների արդյունքները.

7) իրականացնում է սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

19. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) խորհրդի նիստից առնվազն երկու օր առաջ գրավոր հարցեր ներկայացնելու խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու համար.

2) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) ծանոթանալու խորհրդի նիստերի արձանագրություններին:

20. Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել խորհրդի աշխատանքներին.

2) ստորագրել խորհրդի նիստի արձանագրությունը.

3) իր լիազորությունների սահմանում պատասխանել մրցույթների հայտատուների հարցերին.

4) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

## IV. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

21. Խորհրդի քարտուղարը խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով `

1) նախապատրաստում է խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, անհրաժեշտ նյութերը և դրանք ներկայացնում խորհրդի նախագահին.

2) ոչ ուշ, քան խորհրդի նիստից երեք օր առաջ խորհրդի անդամներին է ուղարկում նիստի օրակարգի նախագիծն ու նախատեսված հարցերին առնչվող նյութերը.

3) կազմակերպում է խորհրդի նիստի նախապատրաստումը.

4) կազմակերպում է խորհրդի գործավարությունը.

5) արձանագրում է խորհրդի նիստերը.

6) կազմում է խորհրդի կողմից ընդունվելիք եզրակացությունների նախագծերը.

7) իրականացնում է սույն կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

## V. ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ

22. Խորհրդի խորհրդատուն՝

1) կոմիտեի աշխատակից է.

2) խորհրդի անդամ չէ.

3) իրականացնում է խորհրդատվություն խորհրդի անդամների համար: